

## ՍԱՇՎԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Գ. Հարությունյան – ՀՀ ՍԴ նախագահ

(զեկույցի համառորդ գերսպր Երեւանյան միջազգային խորհրդաժողովում,  
Դիլիջան, 2012թ. հոկտեմբերի 5-ին)

Միջազգային խորհրդաժողովի հարգելի մասնակիցներ,  
Հարգարժան դիլիջանյայք և պարոնյայք,

Երեւանյան այս խորհրդաժողովի քննարկմանը ներկայացված թեման բազմից է դարձել միջազգային գործեր ֆորումների ուշադրության առարկա, սակայն շարունակում է մնալ հրաժարական ուշադրության արժանի: Վստահ եմ, որ շատ ելույթներում կվերլուծվեն առանձին երկրներում հիմնահարցի գործարնույթ դրսեւորումները, հնարավորություն կունենաք մոփիկից ծանոթանալու միջազգային փորձին ու այս ոլորտում դրսեւորվող հիմնական միգրումներին:

Ես ցանկանում եմ Ձեր ուշադրությունը բեւեռել մի շաբաթ, մեր կարծիքով՝ հասկացությաին բնույթը ու ելակերպային նշանակություն ունեցող, հիմնախնդիրների վրա, որոնցից հիմնականներն են.

**Նախ**՝ ի՞նչ ենք հասկանում սահմանադրական դարձանի որոշում ասելով:

**Երկրորդ**՝ ի՞նչ ասել է սահմանադրական դարձանի որոշման կագաղաքական:

**Երրորդ**՝ ի՞նչ իրավական բնույթը ու հետեւանք ունեն սահմանադրական դարձանի իրավական դիրքորոշումները և որքանով է միջազգային պրակտիկայում ձեւավորվել «սահմանադրական դարձանի նախադեպային իրավունք» ինստիտուտը:

**Չորրորդ**՝ ինչո՞ւ են կայանում պետական իշխանության գործեր մարմինների սահմանադրական եւ օրենսդրական պարտականությունները սահմանադրական դարձանի որոշումների կագաղաքական ապահովելու գործում:

**Դինգերորդ**՝ որքանո՞վ է սահմանադրական դարձանը նախադրյալներ սպեկտրում իր իսկ որոշումների կագաղաքական ապահովելու համար:

Առաջին հարցադրումը թվում է պարզ ու առաջին հայացքից՝ նույնիսկ ավելորդ: Սակայն իրական կյանքն այլ բան է վկայում: Հաճախ կարելի է հանդիպել սահմանադրական դարձանի որոշումների, որոնք հասնում են մինչեւ 60-70 էջի: Կան նաև շատ համառորդ որոշումներ, ինչպես, օրինակ, Ֆրանսիայի սահմանադրական խորհրդի, որոնք երկու-երեք էջերի սահմաններում են: Սակայն, բոլոր դեպքերում, բնորոշ այն է,

որ այդ որոշումներում առկա են գործի հանգամանքների նկարագրական մաս, սահմանադրա - իրավական վերլուծություն, դրանց արդյունքում ձեւավորված իրավական դիրքորշումներ եւ որոշման եզրափակիչ մասը, այսպես կոչված՝ դափարանի վերդիկտը: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր իրավական դերն ու նշանակությունը, իսկ բոլորը միասին՝ դափարանի որոշման լեզվիմության երաշխավորման կարեւորագույն նախապայմանն են: Խնդիրն այն է, թե որքանով է այդ ամենն անհրաժեշտ սահմանադրական դափարանի որոշման եզրափակիչ մասը ձեւակերպելու համար, եւ դրանցից յուրաքանչյուրը, հարկապես դափարանի իրավական դիրքորշումները՝ առանձին վերցրած, ինչ ինքնուրույն իրավական դեր ու նշանակություն ունեն, ինչ իրավական հետեւանքների են հանգեցնում:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դափարանը մի շարք որոշումներում այն դոկտրինալ մոփեցումն է առաջադրել, որ սահմանադրական դափարանի որոշմանը պես է մոփենալ որպես մեկ ամբողջություն՝ չառանձնացնելով եզրափակիչ մասը դափարանի իրավական դիրքորշումներից: Մեր մոփեցումները հիմք հանդիսացան օրենսդրական համարժեք ձեւակերպումների համար: Օրինակ՝ ՌԱ Ազգային ժողովը յուրաքանչյուր միջազգային պայմանագիր վավերացնելիս իր որոշման մեջ շեշտում է, որ ելնում է սահմանադրական դափարանի համապարասիսն որոշման մեջ արդահայրված իրավական դիրքորշումներից: Տվյալ դեպքում գործ ունենք երկու փարանջապես իրավիճակների հետ: Նախ, եթե սահմանադրական դափարանը որոշման եզրափակիչ մասում գրնում է, որ դպրոցական պայմանագրով սպանձնված այս կամ այն պարտավորությունը չի համապարասիսնում ՌԱ Սահմանադրությանը, ապա Սահմանադրության 102-րդ հոդվածի հիմքով այդ պայմանագիրը չի կարող ներկայացվել ՌԱ Ազգային ժողովը եւ վավերացման գործընթաց սկսվել: Սահմանադրական դափարանի որոշման եզրափակիչ մասում դպրոցական պայմանագրով սպանձնված բոլոր պարտավորությունները սահմանադրական ճանաչելն անհրաժեշտ, բայց բավարար պայման չէ պայմանագրի վավերացման համար: Օրենսդրության պահանջն է, որ վավերացվող պայմանագիրը կարող է գործել դրա դրույթների այն սահմանադրափական բովանդակությամբ, որոնք բացահայտվել են սահմանադրական դափարանի իրավական դիրքորշումների շրջանակներում: Ենթագայում կանդրադառնանք նաև այլ օրենսդրական լուծումների, որոնք բոլորը բխում են մեկ միասնական իրավական դրամաբանությունից՝ սահմանադրական դափարանի իրավական դիրքորշումները, լինելով որոշման ան-

**քակդելի մաս, ունեն նաև ինքնուրույն իրավական բովանդակություն եւ իրավակիրառական նշանակություն:**

Ասվածի հիման վրա փորձենք կարարել առաջին ընդհանրացումը՝ **սահմանադրական դադարանի որոշումը՝ քննության առարկա սահմանադրափական հիմնախնդրի էության բացահայփման հիման վրա, Սահմանադրության նորմերի իրավական բովանդակության պաշտոնական մեկնաբանման եւ իրավական նորմերի սահմանադրափական բովանդակության բացահայփման արդյունքում կայացրած համապարփադիր իրավական եզրահանգում** է: Այսպեսից հետեւում է, որ թերի է ու ոչ լիարժեք սահմանադրական դադարանի որոշման կարարումը դիմարկել միայն այդ որոշման եզրափակիչ մասի իրավական հետեւանքների դեսանկյունից: **Սահմանադրական դադարանի որոշման կարարումը եռամիասնական իրավական հետեւանք պետք է ունենա:** Այն պետք է. **առաջին՝** օրյեկտիվ իրավունքի պաշտպանության երաշխիք հանդիսանա յուրաքանչյուրի համար, **երկրորդ՝** պաշտպանի կոնկրետ անձանց սուբյեկտիվ իրավունքը, **երրորդ՝** դառնա իրավունքի աղբյուր իրավասկեղծի եւ իրավակիրառի համար՝ ուղղորդիչ դեր կարարելով իրավունքի զարգացման բնագավառում: Այս բոլորը միասին կարող են երաշխավորել Սահմանադրության գերակայությունը՝ իրավական ակդերի սահմանադրականության ապահովման ճանապարհով:

Նշված պարագաներից վերջինը հարուկ ուշադրության է արժանի: Այն մասով, որով սահմանադրական դադարանի իրավական դիրքորոշումները վերաբերելի են իրավակիրառին, դրանք պետք է անմիջական կիրառական դեր ու նշանակություն ունենան այն պարզ պարճառով, որ դրանք ոչ այլ ինչ են, քան Սահմանադրության դրույթների պաշտոնական մեկնաբանություն, որի իրավասությունը վերապահվում է բացառապես սահմանադրական դադարաններին: **«Սահմանադրության 93 հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադարությունն իրականացնում է սահմանադրական դադարանը: Այս հենքի վրա է ձեւավորվում սահմանադրական դադարանի նախադեպային իրավունքը,** ինչն ինքնուրույն գործառնական ու կառուցակարգային դերակարգություն է իրականացնում իրավական պետքության իրավական համակարգում: Առանց սահմանադրական դադարանի նախադեպային իրավունքը պարշաճ ընկալելու եւ իրացնելու՝ անհնարին է երկրում սահմանադրականություն հաստափել ու խոսել Սահմանադրության գերակայության երաշխավորման կամ իրավական պետքության գոյության մասին:

Փաստն այն է, որ հագլապես նոր ժողովրդավարության երկրներում դեռևս հսկակ կայացած ու ամբողջականացված չէ սահմանադրական դարարանի նախադեպային իրավունքը: Բնորոշ օրինակ կարող է ծառայել ՀՀ դարական օրենսգրքի 15-րդ հոդվածը: Վերջինս, մասնավորապես, ՀՀ դարարանների համար պարփառիր համարելով Մարդու իրավունքների եվրոպական դարարանի նախադեպային իրավունքը, բացարձակապես շրջանցում է սահմանադրական դարարանի նախադեպային իրավունքը: Սպեղծվում է երկակի իրավիճակ՝ երկրում կոնվենցիոն իրավունքների պաշտպանության երաշխիքներն էապես գրաբերվում են սահմանադրական իրավունքների պաշտպանություն և իրաշխիքներից: Արդյունքում՝ դարական պեսակեդից հնարավորություն ունենալով շրջանցելու սահմանադրական դարարանի իրավական դիրքորոշումները: Այս խնդիրը գրեթե գոյություն չունի բոլոր այն երկրներում, որքեզ ներդրված է լիարժեք սահմանադրական գանգարի ինսպիրուտը, դարական ակդերը նույնպես սահմանադրական արդարադապության օբյեկտ են, լիարժեք երաշխավորված է մարդու սահմանադրական արդարադապության իրավունքը:

Անառարկելի է, որ սահմանադրական դարարանի որոշումների իրացման բուն նպատակը Սահմանադրության գերակայության երաշխավորումն է: Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե գործում է սահմանադրական արդարադապության լիարժեք համակարգ, իրավահարաբերությունների հիմքում հասպարուն ձեւով դրվում է սահմանադրական դարարանի նախադեպային իրավունքը, պերական իշխանության յուրաքանչյուր մարմին իրավական հսկակ պարփակորվածություն ունի այդ իրավունքի իրացումը երաշխավորելու համար:

Ընդհանրապես սահմանադրական դարարանի որոշման եզրափակիչ մասի իրացման խնդիր չի կարող առաջանալ, քանի որ հարցը կարգավորվում է իրավունքի ուժով: Տարակ է, որ եթե սահմանադրական դարարանը նորմը ճանաչում է Սահմանադրությանը հակասող, ապա այն իրավունքի ուժով դառնում է անվավեր եւ չի կարող այլեւս կիրառվել: Օբյեկտիվ իրավունքի պեսանկյունից այսպես որեւէ այլ հանգամանք չի առաջանում: Խնդիրներն ակնհայտ են դառնում, մի դեպքում, նոր հանգամանքի հիմքով սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության հարցում, մյուս դեպքում՝ սահմանադրական դարարանի իրավական դիրքորոշումների իրացման հարցում: Ուստի փորձենք անդրադառնալ պերական մարմինների խնդիրներին այս երկու ոլորդներում:

Նախորդ Երեւանյան միջազգային կոնֆերանսում ես հանգամանորեն անդրադարձել եմ նոր հանգամանքների հիմքով սահմանադրական դատարանի որոշումների իրացման հիմնախնդրին: Այսօր պարզապես պետք է նշեմ, որ անցած փարեւերջին Հայաստանում կադարձեցին լուրջ օրենսդրական բարեփոխումներ, եւ վիճակն արմադապապես փոխվել է: **ՃՃ քրեական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում,** ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» **ՃՃ օրենքում կադարձած փոփոխությունները,** մեր կարծիքով, օրինակելի իրավական լուծումներ են եւ կարող են լայն հետաքրքրության առարկա դառնալ այս խորհրդաժողովի մասնակիցների եւ փարբեր երկրների համար: Փոփոխությունների ընդհանուր դրամաբանությունը հանգում է նրան, որ նոր հանգամանք է առաջանում ոչ միայն կոնկրետ գործով կիրառված նորմը հակասահմանադրական ճանաչելու դեպքում, այլև այդ նորմը դատական պրակտիկայում սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից դարբերվող մեկնաբանությամբ կիրառելու դեպքում: Տվյալ պարագայում սահմանադրական դատարանին է իրավունք վերապահված որոշելու, թե փվյալ դատական ակդր օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման, թե՝ ոչ:

Մենք կարծում ենք, որ առկա սահմանադրահրավական լուծումների պայմաններում սահմանադրական դատարանի որոշումների կադարձումը երաշխավորելու հարցում որոշիչ դեր ունեն պետական իշխանության հետեւյալ ինսպիրուվումները.

**առաջին՝ Երկրի Նախագահը:** Բազմաթիվ երկրների սահմանադրական նորմերով ամրագրվում է, որ Նախագահը հետեւում է Սահմանադրության պահպանմանը կամ դրա երաշխավորն է: Սահմանադրության պահպանությունը պահանջում է ոչ միայն դրա գերակայության երաշխավորում, այլև հասարակական հարաբերությունների հետեւողական սահմանադրականացում: Աշխարհի առաջին սահմանադրական դատարանն սպեղծած երկրի՝ Ավստրիայի Տիմնական օրենքում /հոդված 146/ շաբ հսկակ է սահմանված, որ սահմանադրական դատարանի որոշումների կադարձան երաշխավորը Երկրի Նախագահն է: Առանց դրա՝ Նախագահը չի կարող Սահմանադրության պաշտպանի գերագույն առաքելությունն իրականացնել: Խնդիրն այն է, որ շաբ երկրներում սահմանադրական հիշյալ նորմը գործառնական անհրաժեշտ հսկակեցում չտնի եւ վերացական բնույթ է կրում: Մենք համոզված ենք, որ հեռանկարային լուծումը սահմանադրական մշտադիմական ամբողջական համակարգի արմադապորումն է, որում առանձնահարուկ դեր պետք է վերապահվի պետության գլխին:

**Երկրորդ՝ օրենսդիր մարմինը:** Օրենսդրի դերը երկակի է, նախ՝ համակարգված հաղթահարել հնարավոր հետեւանքները, որոնք կարող են առաջանալ օրենքի հակասահմանադրական ճանաչված նորմի իրավական շրջանառությունից դուրս բերվելու հետեւանքով: Երկրորդ՝ հիմք ընդունելով սահմանադրական դադարանի իրավական դիրքորոշումները՝ իրականացնել օրենսդրության զարգացման նպատակային քաղաքականություն: Այս խնդիրներն իրականացնելի են միայն մեկ դեպքում, եթե օրենսդիր մարմնում հագուստ ուսումնասիրվում է սահմանադրական դադարանի յուրաքանչյուր որոշում եւ դրա արդյունքում ձեւավորվում է համարժեք օրենսդրական նախաձեռնություն: **ՀՀ Ազգային ժողովի** փորձը վկայեց, որ նման համակարգը չափազանց արդյունավետ է գործում: Միայն վերջին չորս տարում **ՀՀ Ազգային ժողովում** նման կարգով ներկայացվել են շուրջ հինգ տասնյակ օրենսդրական նախաձեռնություններ եւ հրավիրվել է Ազգային ժողովի երկու արդահերթ նիստ: Թերին այն է, որ խնդիրը լուծվել է պարզապես պաղամենսի նախագահի կազմակերպչական նախաձեռնության շնորհիվ եւ օրենսդրական լուծում չի ստացել: Վերջինս կայուն երաշխիքներ կսպեղծի սահմանադրական դադարանի որոշումների կադրումը եւ Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու համար:

**Երրորդ՝ կառավարությունը:** Կառավարության դերականարությունը սահմանադրական դադարանի որոշումների կադրումն ապահովելու գործում եռակի է. ա/ ուսումնասիրելով այդ որոշումները՝ հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ՝ հագուստ բոլոր այն օրենքների վերաբերյալ արդահայրված իրավական դիրքորոշումների շրջանակներում, որոնք օրենսդիրն ընդունել է կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ, թ/ համապատասխան փոփոխություններ կադրել կառավարության որոշումներում, որոնք օրենսդիրն ընդունել է կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ, ք/ համապատասխան փոփոխություններ կադրել կառավարության որոշումներում, որոնք օրենսդիրն ընդունել է կառավարության օրենսդրական դադարանի որոշումները դնել կառավարության նորմասպեղծ քաղաքականության հիմքում:

Այս հարցերի լուծումը մեզանում որեւէ իրավական կարգավորում չի ստացել: Կառավարությունը մինչ օրս սահմանադրական դադարան չի դիմել նորմագիլ ակտերի սահմանադրականության հարցով: Կառավարությունը նախկինում որեւէ հագուստ քննարկում չէր կազմակերպել սահմանադրական դադարանի որոշումների կադրումն ապահովելու համար: Մեկ դադարի առաջ այս խնդրի լուծումը վերապահվեց **ՀՀ արդա-**

բաղադրության նախարարությանը: Ներկայում վերջինս բարեխփող ձեւով ուսումնասիրում է սահմանադրական դատարանի բոլոր որոշումները եւ դրանց կապարումը երաշխավորելու համար համապատասխան օրենսդրական նախաձեռնության նախագիծ է նախապատրաստում կառավարությանը ներկայացնելու համար: Այս փորձի ուսումնասիրությունը նույնպես կարող է ուսանելի լինել: Միաժամանակ, մենք կարծում ենք, որ այսպես նույնպես խնդրի լուծումը պետք է բարձրացվի օրենքի կանոնակարգման մակարդակի:

**Չորրորդ՝ դատարանները:** Այս մակարդակում, ինչպես նշեցինք, ամեն ինչ պայմանավորված է անհապական սահմանադրական գանգափի ինսփիփուփի բնույթով եւ լիարժեքության ասփիճանով: Դիմնական խնդիրը նոր հանգամանքների ինսփիփուփի գործունակության երաշխավորումն է, ինչը մեզ դեռևս չի հաջողվել: Դամոզված ենք, որ հարցի միակ լուծումը լիարժեք սահմանադրական գանգափի ինսփիփուփի արմագավորումն է, ինչին բազմից անդրադարձել է նաև Վենեփիկի հանձնաժողովը: Գոնե մեզանում ձեւավորված իրավական պրակտիկան վկայեց, որ բոլոր այլ լուծումները կիսալուծումներ են եւ նվազ արդյունավետ:

Մեր վերջին հարցադրման պատասխանն առաջին հերթին վերաբերում է սահմանադրական դատարանի որոշումների որակին: Սահմանադրական դատարանը չի կարող իր որոշմամբ խնդիր սպեղծել: Դատարանի բոլոր որոշումները կոչված են խնդիր լուծելու, ընդ որում՝ հաճախ շափ բարդ, սակայն բոլոր պարագաներում սահմանադրական բնույթի ու նշանակության խնդիր: Սահմանադրական արդարադապության կարեւոր սկզբունքներից է գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը: Վերջինս պետք է ոչ միայն հետեւողական, այլև զգույշ կիրառվի: Սահմանադրական դատարանը պարզապես սխալվելու իրավունք չունի: Սա է սահմանադրական արդարադապության գերազույն սկզբունքը: Ինչպես հասնել դրան: Վոաջին հերթին սահմանադրական դատարանի գործունակությունը եւ ապա դատավարական ընթացակարգերի ամբողջականությունը երաշխավորելու ճանապարհով: Թե ինչպես վերջինիս հասնել, դա, թերեւս, կարող ենք դարձնել ինքնուրույն քննարկման առարկա:

Շնորհակալություն ուշադրության համար: